քում նա կփարատի quasi — գիտնական խաբեբայութիւնը և նրանով գրաւուած նախապաշարումը։

Թէ մինչև որ աստիճան արդէն Ամերիկայում և Անգլիայում տարածուած պիտի լինի այդ նորագոյն գիտը, պիտի դատել նրանով, որ գիտնական հանդէսները և օրաթերթերը տարածեցին նրա համբաւը իրենց հարիւր հազարաւոր ընթերցողների շրջանում։

Ա. Մ.

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿԱՆԱՆՑ ԶԱՐԴԵՐԸ

Հայ կանանց

1. *Փաքուլ* վրան ոսկի և մարգրիտ շարուած է և գըլուխնին կդնեն։

2. *Գոըշայ* վրան ոսկի թուրեր և մարգրիտ շարուած է և գլուխնին կդնեն։

3. *Գամշի* վրան մարգրիտ և էլմաստեղէններ շարուած է։ Ճակատնին կկապեն։

4. *Ճակտնուց* վրան մարգրիտ ուրուբեայ շարուած. երեսնուն կկապեն։

5. *Շըռաֆէ* մարգրտով թոռ բանուած է և վարի կողմն ալ հինկնոց շարուած է. գամշու վարի կողմը կկախեն։

6. *Օղերներ* տեսակ տեսակը կայ, էլմաստով, մարգրտով, զմրուխտով և ոսկեղէն. ականջը կդնեն։

7. *Գլխու չիթ* վրան թուրեր շարուած է. գլխու ետևը կձգեն։

8. *Պօղազի հայլեր*։

9. *Երկար վզի հայլեր և չակրտակ*։

10. *Աշգալանտի*, վզերնին կձգեն երեք տակէն և մէկ տակէն։

11. *Պօղմաճայ*, շարիթի վրան տեսակ մ' ոսկի շարուած է։

12. *Զնկիր*. այն ալ տեսակ մը ոսկի է սուլուկի պէս երկար և սրտերնու վրայ կձգեն։

13. *Թըլըսըմ*. ինքը զանճիրէ և վրան ուռուբեայ շարուած է։

14. *Շարան*. վրան տեսակ տեսակ ոսկիներ կշարեն։

15. *Մփթուլ*. մարգրտով և հայերով շարուած։

16. *Պօղազի մարգրիտ*. վրան էլմաստ խաչ։

17. *Թօլլամայ լթոռ.* բանուած է մարգրտով և վարի կողմն ալ ոսկիներ շարուած է սրտերնու վրան կձգեն։

18 *Պլթիռ.* թևերնին կդնեն ոսկի է։

19. *Սէկտակ պլթիռ.* թևերնին կդնեն ոսկի է։

20. *Թեւի նալիր չակրտակ։*

21. *Ոսկի պոչիր.* գլխնու ետևը կը ձգեն։

22. *Ջէքիր.* մեծ մատերնին կդնեն։

23. *Թախըմ.* միւս մատերնուն կդնեն, և ուրիշ տեսակ տեսակ մատանիներ կայ, էլմաստ, եագուտ, զմրուտ ևայլն։

Արծաթեղէն.

24. *Քամար.* տեսակ տեսակը կայ, չիփթիշլի, չագալայ և երկար կամարներ։

25. *Թիղըրամայ.* տեսակ մը կոճակէ զանձիրի վրան կշարեն և կկարեն թևերնուն։

26. *Ջնկզնկ.* պզտիկ տղաներու ոտք կանցնեն։

27. *Մըսաւէ.* մանուկներու թև կանցնեն զրօսանքի համար։

28. *Ծըքլագ.* աղջիկներ պօղազնին կանցնեն։

Հայ քիւրդերու ձգած արծաթեղէնները։

1. *Պլազուկ.* թևերնին կդնեն։
2. *Օղեր.* ականջնին կդնեն։
3. *Մատանի.* մատերնին կդնեն։
4. *Քամար.* մէջքերնին կկապեն. տեսակ տեսակը կայ։
5. *Պօզմանճայ* վզերնին կձգեն։
6. *Ծըռիլթներ.* գլուխնին կկապեն։

(*Գ. Եպ. Սրուանձտեանի հաւաքածոյքից*)

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Գ. տպ. Վաղարշապատ 1896.

Կարապետ վարդապետ. Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի Թուղթը առ Արաս Աղուանից կաթուղիկոս, Վաղարշապատ 1896.

— Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնացելոյ բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս. Վաղարշապատ 1896.